



CENTER FOR CONSTITUTIONAL STUDIES,  
LEGISLATIVE DEVELOPMENT AND REFORM MONITORING



### ՀՐԱՏԱՊ ԶԵԿՈՒՅՑ

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ  
ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԳՈՐԾԵՐՈՎ ՆԵՐԴՐՎՈՂ (ԳՈՐԾԱՐԿՎՈՂ)  
ՎԱՐՈՒՅԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

---

ՀՐԱՏԱՊ ԶԵԿՈՒՅՑ

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ  
ԳՈՐԾԵՐՈՎ ՆԵՐԴՐՎՈՂ (ԳՈՐԾԱՐԿՎՈՂ) ՎԱՐՈՒՅԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Նախաբան.....2

1.Մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի ընդհանուր նկարագիրը.....3

2.Դեռևս մեկ դար առաջ «Ժամանակավրեպ» հռչակված տեսության գաղափարների վրա հիմնված մասնավոր մեղադրանքի գործերի կազմակերպումը Քրեական դատավարության օրենսգրքում.....7

3.Ներդրվող մասնավոր մեղադրանքի մոդելի քննադատական վերլուծությունը՝ հանցագործությունից տուժած անձի իրավունքների ու օրինական շահերի ապահովման լույսի ներքո .....10

4.Քրեական դատավարության օրենսգրքով մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի ներդրվող մոդելով նախաքննության ծանրաբեռնվածությունը բեռնաթափելու նպատակի իրագործելիությունը.....17

5.Եզրահանգումներ, առաջարկներ, եզրակացություն.....20

ՀՐԱՏԱՊ ԶԵԿՈՒՅՑ

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵՂԱՂՐԱՆՔԻ  
ԳՈՐԾԵՐՈՎ ԼԵՂՂՐՎՈՂ (ԳՈՐԾԱՐԿՎՈՂ) ՎԱՐՈՒՅԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Նախաբան**

2024թ. հոկտեմբերի 3-ի N 1551-Ա որոշմամբ ՀՀ կառավարությունը համաձայնություն է տվել Հայաստանի Հանրապետության առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանների քրեական մասնագիտացման դատավորների թվակազմն ավելացնելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի՝ 2024 թվականի հունվարի 26-ի առաջարկությանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ քր.դատ.օր.) 483-րդ հոդվածի 25-րդ մասի անցումային դրույթի ուժով՝ մասնավոր մեղադրանքի վարույթ իրականացնելու իրավասություն ունեցող *դատավորների նշանակումից* հետո սկսվելու է գործարկվել քր.դատ.օր.-ի 54-րդ գլխով նախատեսված մասնավոր մեղադրանքի վարույթը՝ իր յուրահատուկ կարգավորումներով:

*Հաշվի առնելով, որ այդ վարույթով նախատեսվել են մի շարք առանձնահատուկ կարգավորումներ, որոնք կարող են խնդրահարույց լինել*

- ✓ *հանցանքից տուժած անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության ապահովման, ինչպես նաև*
- ✓ *այդ նոր ներդրվող վարույթով հետապնդվող նպատակի՝ նախաքննության բեռնաթափմանը հասնելու տեսանկյունից՝*

*Կենտրոնը, ելնելով իր կանոնադրական նպատակներից, ձեռնամուխ է եղել մասնավոր մեղադրանքի վարույթի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումների առանձնահատկությունների վերաբերյալ հրատապ զեկույց կազմելուն:*

## 1. Մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի ընդհանուր նկարագիրը.

Քր.դատ.օր.-ով ամրագրվեց խնդրո առարկա գործերով մեղադրանքի կազմակերպման յուրահաստուկ մոտեցում:

Նախ՝ այստեղ մասնավոր մեղադրանքի գործերի շրջանակը «դուրս է բերվել» Քրեական դատավարության օրենսգրքից, և այդ հանցագործությունների շրջանակը *սահմանվել է 05.05.2021թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի* (այսուհետ նաև՝ քր.օր.) 15-րդ հոդվածով:

Քր.դատ.օր.-ով փորձ է արվում մասնավոր մեղադրանքի գործերով մեղադրանքը կազմակերպել *միայն հիմնական մասնավոր մեղադրանքի կարգով* (քր.դատ.օր.-ի 11-րդ հոդվածի 2-րդ մաս, 451-րդ հոդված) և, որպես կանոն<sup>1</sup>, նախատեսվում է բացառել ինչպես այդ գործերով *մինչդատական վարույթը*<sup>2</sup> (քր.դատ.օր.-ի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ, 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետեր, 451-րդ հոդված), այնպես էլ՝ վարույթին *պետական (հանրային) մեղադրողի մասնակցությունը*<sup>3</sup>:

Քր.դատ.օր.-ի կարգավորումներով ներդրվող մոդելում մեղադրանքի պաշտպանության, այդ թվում՝ մեղադրանքի ապացուցման և ի պաշտպանություն մեղադրյալի բերված փաստարկների հերքման պարտականությունը ամբողջությամբ վերապահվում է տուժողին (նրա ներկայացուցչին, օրինական ներկայացուցչին) (քր.դատ.օր.-ի 17-րդ հոդվածի 3-րդ մաս, 455-րդ հոդվածի 2-րդ մաս):

Մասնավոր մեղադրողն<sup>4</sup> այստեղ ունի նաև «*բողոքը հետ վերցնելու*» իրավունք, որը, ըստ քր.դատ.օր.-ի կարգավորումների, իր հերթին, կարող է իրացվել և՛ հաշտության<sup>5</sup>, և՛ քրեական հայցից հրաժարվելու ձևով (այդ թվում՝ երեք անգամ տուժողի (նրա ներկայացուցչի) կողմից դատական նիստին չներկայանալով (ինչը գրականության մեջ դիտարկվում է իբրև մեղադրանքից հրաժարվելու ինքնուրույն՝ պասիվ ձև))<sup>6</sup>, որի

<sup>1</sup> Տե՛ս քր.դատ.օր.-ի 11-րդ հոդվածով սահմանված դատախազի բացառիկ լիազորությունները, ինչպես նաև 451-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կետը, բացի այդ՝ քր.դատ.օր.-ի 11-րդ հոդվածի 3-րդ մաս:

<sup>2</sup> Այս գործերով քրեական վարույթը փաստացի նախաձեռնվում է հանցագործությունից տուժած անձի (նրա օրինական ներկայացուցչի) կողմից դատարան քրեական հայց ներկայացնելով (քր.դատ.օր.-ի 451-րդ հոդվածի 1-ին մաս):

<sup>3</sup> Մասնավոր մեղադրանքի կազմակերպման այս տեսակը վերլուծվել է աշխատանքի՝ «հիմնական» մասնավոր մեղադրանքի տեսակին նվիրված հատվածում:

<sup>4</sup> Մասնավոր մեղադրանքի կարգով իրականացվող վարույթում առաջին ատյանի դատարանում իր անունից մեղադրանքը ներկայացնող տուժող (քր.դատ.օր.-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետ):

<sup>5</sup> Հաշտությունը հնարավոր է ինչպես նախնական դատալուսման (քր.դատ.օր.-ի 454-րդ հոդվածի 2-րդ մաս), այնպես էլ հիմնական դատալուսման ընթացքում՝ մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի՝ առանձին սենյակ հեռանալը (քր.դատ.օր.-ի 455-րդ հոդվածի 3-րդ մաս):

<sup>6</sup> Մեղադրանքից (քրեական հայցից) հրաժարվելու ակտիվ և պասիվ ձևերի մասին տե՛ս, օրինակ, Степанова В.Г. Отказ частного обвинителя от обвинения как основание прекращения уголовного судопроизводства по делам частного обвинения (<https://cyberleninka.ru/article/n/otkaz-chastnogo-obvinitelya-ot-obvinieniya-kak-osnovanie-prekrascheniya-ugolovnogo-sudoproizvodstva-po-delam-chastnogo-obvinieniya>), Корякин А. Л. նշվաշխ., էջ 167: Մասնավոր մեղադրողի կողմից անհարգելի պատճառով չներկայանալը մեղադրանքից հրաժարվելու ձև են դիտարկվում նաև Մոսկվայի պետական

պայմաններում դատարանը պետք է դադարեցնի քրեական հետապնդումը և կարճի քրեական վարույթը (քր.դատ.օր.-ի 456-րդ հոդված):

Կարևոր է ընդգծել նաև այն, որ եթե հանրային մեղադրանքի գործերով դատախազն այլևս զրկվում է մեղադրանքից հրաժարվելու լիազորությունից (դատախազը քր.դատ.օր.-ի կարգավորմամբ իրավասու է միայն եզրափակիչ ելույթում *միջնորդելու* դատարանին ամբողջությամբ կամ որոշակի մասով արդարացնել մեղադրյալին, ինչն էլ դատարանը կարող է բավարարել կամ մերժել (քր.դատ.օր.-ի 277-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասեր)), ապա բոլորովին այլ մոտեցում է որդեգրված մասնավոր մեղադրանքի գործերով վարույթում. այստեղ մասնավոր մեղադրողն ունի ինչպես լրիվ, այնպես էլ *մասնակի հրաժարվելու իրավասություն* (քր.դատ.օր.-ի 455-րդ հոդվածի 5-րդ մաս)՝ դրանով փաստացիորեն սահմանափակելով դատարանին:

Ինչ վերաբերվում է այս գործերով *դատախազի մասնակցությանը*, ապա քր.դատ.օր.-ի կարգավորումներով դա հնարավոր է դառնում ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքներով, ինչպես նաև անձի՝ իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով իր իրավաչափ շահերը պաշտպանել չկարողանալու դեպքում միայն (քր.դատ.օր.-ի 11-րդ հոդվածի 4-րդ մաս):

Վերոգրյալից ստացվում է, որ պետությունը (հանձին՝ դատախազի) ձեռնպահ է մնում այս գործերով քրեական հետապնդում իրականացնելուց: Ավելին, բացի վերոնշյալ բացառիկ դեպքերից, *դատախազը նույնիսկ հնարավորություն չի ունենում մասնավոր մեղադրանքի գործով վարույթին ներգրավվելու*: Եվ, օրինակ, երբ անձն ունակ է իր շահերը արդյունավետ պաշտպանելու, չի գտնվում անօգնական վիճակում կամ ենթադրյալ հանցանք կատարած անձից կախվածության մեջ, ինչպես նաև այդ անձի նկատմամբ կատարված արարքը չի պարունակում ընտանիքում բռնության հատկանիշներ, *այդ դեպքերում դատախազի մասնակցությունը վարույթին բացառվում է*:

Ինչ վերաբերվում է դեպքերին, երբ հանրային մեղադրանքի գործերով հարուցված վարույթում պարզվի, *որ արարքը դասվում է մասնավոր մեղադրանքի գործերի շարքին*, ապա այդպիսի իրավիճակում պետք է քրեական վարույթը կարճվի (քր.դատ.օր.-ի 13-րդ

համալսարանի քրեադատավարագետները, տե՛ս Курс уголовного процесса / Под ред. д.ю.н., проф. Л.В. Головки, - 2-е изд., испр. -М.: Статут, 2017, էջ 1029:

<sup>7</sup> Խոսքը գնում է միայն մասնավոր մեղադրանքի գործերով իրականացվող վարույթի մասին, և այս պնդումն անելիս մենք չենք ներառում այն դեպքերը, երբ անձին վերագրվում են մի քանի արարքներ, որոնց մի մասը հանդիսանում է մասնավոր, իսկ մյուս մասը հանրային մեղադրանքի գործ: Քր.դատ.օր.-ով այդ դեպքերի համար որդեգրվել է քրեական հետապնդումը հանրային կարգով իրականացնելու մոտեցում (քր.դատ.օր.-ի 11-րդ հոդվածի 3-րդ մաս):

հողվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետեր) և/կամ քրեական հետապնդումը դադարեցվի (քր.դատ.օր.-ի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ)՝ անկախ տուժողի բողոքել-չբողոքելու հանգամանքից:

Այսինքն՝ նույնիսկ այն դեպքում, երբ հանրային հետապնդման ժամանակ պարզվի, որ արարքը համարվում է մասնավոր մեղադրանքի գործ, և միաժամանակ, տուժողը բողոքի, միննույն է, քրեական վարույթը պետք է կարճվի և/կամ հետապնդումը պետք է դադարեցվի (ընդ որում՝ քրեական հետապնդումը բացառող այդ հիմքը ռեաբիլիտացնող է (քր.դատ.օր.-ի 12-րդ հոդվածի 2-րդ մաս)) (և այն անձը, ում նկատմամբ այդ հիմքով քրեական հետապնդումը կդադարեցվի, կարող է հետագայում քաղաքացիական դատավարության կարգով ռեաբիլիտացիա պահանջել (քր.դատ.օր.-ի 164-րդ հոդվածի 6-րդ մաս)):

Մինչդատական վարույթում այդ դեպքում քննիչի վրա դրված է մասնավոր մեղադրանքով վարույթ նախաձեռնելու սահմանված կարգը շահագրգիռ անձին բացատրելու պարտականություն (քր.դատ.օր.-ի 207-րդ հոդվածի 8-րդ մաս):

Ինչ վերաբերվում է դատական վարույթում այդպիսի իրավիճակի առաջացմանը, առաջին և հպանցիկ հայացքը քր.դատ.օր.-ին թեև կարող է թյուր կարծիք ձևավորել, թե այդ դեպքում (երբ տուժողը բողոքում է) քրեական վարույթը (հետապնդումը) կարող է շարունակվել, և դատարանը պետք է կայացնի դատավճիռ, սակայն ինչպես պարզ է դառնում քր.դատ.օր.-ի 12, 13 և 315-րդ հոդվածների, 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, ինչպես նաև 376-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 2-րդ մասի վերլուծությունից, պետք է եզրահանգել հակառակի մասին: Եվ բոլոր այն դեպքերում, երբ մասնավոր մեղադրանքի գործերով վարույթն իրականացվի հանրային կարգով, (այսինքն՝ առկա լինի քրեական վարույթը բացառող հանգամանք), և դատարանը, ոչ թե կարճի գործի վարույթը (կամ դադարեցնի քրեական հետապնդումը), այլ կայացնի դատավճիռ (նույնիսկ տուժողի բողոքի առկայության դեպքում), դա դատական ակտի բեկանման հիմք է, և վերաքննիչ դատարանն այդ դեպքում պետք է բեկանի դատական ակտը՝ կարճի քրեական վարույթը (կամ դադարեցնի քրեական հետապնդումը): Հետևաբար՝ պետք է փաստել, որ քր.դատ.օր.-ի կարգավորման դեպքում և՛ մինչդատական, և՛ դատական վարույթում, երբ պարզվի, որ հանցանքը, որի կատարումը մեղսագրվում է անձին, դասվում է մասնավոր մեղադրանքի գործերի շարքում, ապա քրեական վարույթը ենթակա է կարճման և/կամ քրեական հետապնդումը՝ դադարեցման՝ *անկախ տուժողի բողոքի առկայությունից*: Այս պարագայում

վերջինս պետք է արդեն, քր.դատ.օր.-ի 451-րդ հոդվածով սահմանված կարգով, քրեական հայց ներկայացնի դատարան՝ հանդես գալով իբրև հիմնական մասնավոր մեղադրող:

Այս գործերով տուժողին է վերապահված քրեական հայցում ինչպես մեղադրանքը ձևակերպելու, այնպես էլ՝ քրեական հայցում ենթադրյալ հանցանք կատարած անձին նշելու իրավասությունը, միաժամանակ, դատաքննությունը սահմանափակված է միայն **մեղադրյալի և միայն վերջինիս ներկայացված մեղադրանքով** (քր.դատ.օր.-ի 276-րդ հոդվածի 1-ին մաս): Հակառակ կարգավորում չէր էլ կարող նախատեսվել, քանի որ եթե ներկայացված քրեական հայցով դատարանի կողմից քրեական վարույթ սկսելու մասին որոշումը չի կարող դիտարկվել իբրև քրեական հետապնդման գործառույթի տարր<sup>8</sup>, ապա քրեական հայցում չընդգրկված անձանցից բացի, այլ անձանց դատարանի կողմից որպես մեղադրյալ ներգրավելը (այսինքն՝ բողոքի երկատելիության բացակայությունը), բնականաբար, կվկայեր դատարանի կողմից քրեական հետապնդման գործառույթի իրականացման մասին: Հետևաբար՝ պետք է պնդել, որ քր.դատ.օր.-ի կարգավորումներով **բողոքը երկատելի է (այսինքն՝ ենթադրյալ հանցանքը երկու (կամ ավել) անձի կողմից կատարելու պայմաններում մեկի նկատմամբ տուժողի բերած բողոքը (քրեական հայցը) ինքնաբերաբար չի նշանակում բողոք մյուսի նկատմամբ)**:

---

<sup>8</sup> Այս առումով կարևոր դիրքորոշում է արտահայտել ՌԴ Սահմանադրական դատարանն իր որոշումներից մեկում՝ նշելով, որ մասնավոր մեղադրանքի գործերով դատարանի՝ քրեական գործ հարուցելու լիազորությունը, ըստ էության, նշանակում է միայն դատարանի իրավունք և պարտականություն քննության առնելու տուժողի բողոքը: «Դատարանի կողմից մասնավոր մեղադրանքի գործերով տուժողի բողոքի հիման վրա գործի հարուցումն այդպիսով ունի այլ իրավաբանական իմաստ, քան հանրային մեղադրանքի գործերով քրեական գործի հարուցումը»: Տե՛ս ՌԴ ՍԴ 2000թ. հունվարի 14-ի №1-Ո որոշման 7-րդ կետը (<http://base.garant.ru/12118049/>):

2. Դեռևս մեկ դար առաջ «Ժամանակավրեպ» հռչակված տեսության գաղափարների վրա հիմնված մասնավոր մեղադրանքի գործերի կազմակերպումը Քրեական դատավարության օրենսգրքում.

*Եթե փորձենք խմբավորել մասնավոր մեղադրանքի գործերով քր.դատ.օր.-ի մոդելով վարույթի յուրահատուկ պատկերը, ապա պետք է փաստենք, որ այն «խիստ նմանվում է» «մասնավոր դելիկտի» տեսությունից բխող հետևություններին:*

Առաջին՝ այստեղ «մասնավոր մեղադրանքի գործերը» «դուրս են բերվել» Քրեական դատավարության օրենսգրքից և սահմանվում են Քրեական օրենսգրքով:

Երկրորդ՝ այս գործերով մեղադրանքը (չհաշված եզակի բացառությունները) կազմակերպված է հիմնական մասնավոր մեղադրանքի կարգով, և պետությունը՝ հանձին դատախազության, «զերծ է մնում» այդ գործերով մեղադրական գործունեություն իրականացնելուց. դատախազությունը զրկված է տվյալ գործերով մեղադրանքի իրականացմանը ներգրավելու հնարավորությունից: Մասնավոր մեղադրանքի գործերով վարույթը «մասնավոր դելիկտի» տեսության հիման վրա կառուցելիս է, *որ բացառվում էր վարույթին հանրային մեղադրողի ներգրավվումը:* Մասնավոր մեղադրանքի գործերը հիմնավորող այլ տեսությունների դեպքում չէր կարող բացառվել վարույթին հանրային մեղադրողի ներգրավումը:

Իսկ բոլոր այն դեպքերում, երբ վարույթով հետապնդումը, ինչ-ինչ հանգամանքներով պայմանավորված, իրականացված է եղել հանրային կարգով, սակայն պարզվում է, որ այդ արարքը ենթակա է հետապնդման մասնավոր մեղադրանքի կարգով, այլ կերպ ասած՝ դասվում է մասնավոր մեղադրանքի գործերի շարքին, ապա գործի վարույթը պետք է կարճվի և/կամ հետապնդումը դադարեցվի ռեաբիլիտացնող (արդարացնող) հիմքով (անձը ձեռք է բերում ռեաբիլիտացիա պահանջելու իրավունք): Այսպիսի կանոնակարգումը, որն այս շրջանակի գործերով մի կողմից՝ «զրկում է» պետությանը քրեական հետապնդման հարուցման և իրացման լիազորությունից, մյուս կողմից՝ այդպիսի իրավասությամբ է օժտում բացառապես տուժողին (նրա ներկայացուցիչներին), վկայում է այդպիսի հանցագործություններով և՛ պատժի, և՛ քրեական հայցի նյութական իրավունքը հանցանքից տուժած անձին պատկանելու մասին (ինչն էլ «մասնավոր դելիկտի» տեսության կորիզն է):

Երրորդ՝ տուժողն է այստեղ տնօրինում մեղադրանքը՝ ունենալով և՛ քրեական հայց հարուցելու, և՛ դրանից ամբողջությամբ կամ մասնակի հրաժարվելու լիազորություն (այն դեպքում, երբ հանրային մեղադրանքի գործերով այսպիսի լիազորություն չունի դատախազը), որը նույնպես վկայում է այս մոդելում տուժողի և՛ իբրև դատավարական, և՛ իբրև նյութական քրեական հայցվոր լինելու մասին:

Չորրորդ՝ այն, որ այս մոդելում և՛ պատժի, և՛ քրեական հայցի նյութական իրավունքի «իրական տերը» տուժողն է, ակնհայտ է դառնում նաև քր.օր.-ի կարգավորումներից: Քր.օր.-ի 15-րդ հոդվածով սահմանվում է «մասնավոր մեղադրանքի գործերի» շրջանակը, որտեղ նշվում է, որ «անձը *կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության միայն հանցագործությունից* տուժած անձի քրեական հայցի հիման վրա, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի»: Այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ կկատարվի «մասնավոր մեղադրանքի գործերի» շրջանակում ընդգրկված արարք, միաժամանակ բացակայեն քր.դատ.օր-ով նախատեսված բացառիկ դեպքերը, և տուժած անձը քրեական հայց չներկայացնի, ապա անձը չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության, ինչը ենթադրում է, որ *մինչ տուժած անձի կողմից դատարան քրեական հայց ներկայացնելը, այդ արարքը չի կարող պատժելի լինել*: Մյուս կողմից՝ արձանագրելով, որ արարքի պատժելիությունը (հակահրավականությունը) հանցանքի հատկանիշ է՞, *ստացվում է, որ այսպիսի կարգավորման դեպքում, մինչ տուժած անձի կողմից հայց ներկայացնելը, չենք կարող խոսել տվյալ արարքի հանցանք լինելու մասին*<sup>10</sup>:

<sup>9</sup> Արարքի պատժելիությունը հանցանքի հատկանիշ լինելու մասին մանրամասն տե՛ս Գաբուզյան Ա.Հ. նշվ.աշխ., էջ 509-511:

<sup>10</sup> Նկատենք, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքի հանրային քննարկման դրված տարբերակում (հասանելի է հետևյալ հղմամբ. <https://www.e-draft.am/projects/2115>) բացակայում էր նոր քր.օր.-ի 15-րդ հոդվածում ամրագրված «բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի» արտահայտությունը, որպիսի պայմաններում փաստացի անիրագործելի էին դառնում Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ մասով արված բացառությունները, ըստ որոնց՝ դատախազը, անկախ քրեական հայց ներկայացնելուց կամ քրեական հայցից հրաժարվելուց, իրավասու է քրեական հետապնդում իրականացնել հանրային կարգով՝ ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքներով, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներով (մասնավոր մեղադրանքի գործերով- Կենտրոն), եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Բանն այն է, որ այդպիսի կարգավորման պայմաններում եթե, օրինակ, անձը, «մասնավոր մեղադրանքի գործով» գտնվելով ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ, հայց չներկայացնեք, սակայն դատախազը առաջնորդվեք Քրեական դատավարության օրենսգրքի (Նախագծի) 11-րդ հոդվածի 4-րդ մասով և քրեական հետապնդում իրականացնեք կստացվեք, որ անձի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում մի արարքի համար, որը հենց ի սկզբանե չի կարող գնահատվել որպես հանցանք (այս պարագայում կստացվի, որ հետապնդումը կիրականացվի ակնհայտ ապօրինի): Եվ ամեն դեպքում անձը չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության, քանի որ այդ իրավիճակում կբացակայի քրեական պատասխանատվության «հավելյալ» հիմքը (Քրեական օրենսգրքի նախագծի 16-րդ հոդված): Ասվածն ամբողջովին վերաբերելի է նաև Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 11-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կարգավորմանը: Այս առումով տե՛ս Ղազարյան Ա. «Մասնավոր ղեկիկոտի» տեսությունը, և դրա արտահայտությունները մասնավոր մեղադրանքի գործերի կազմակերպման նախագծային կարգավորումների վրա «Տարածաշրջան և աշխարհ», No 3, 2020թ., էջ 39-46: Նշված հարցը բարձրացնելուց հետո արդեն փոփոխության ենթարկվեց

Անդրադառնալով «մասնավոր դեղիկտի» տեսության թույլ կողմերին, և ըստ այդմ՝ դրա մերժելիությանը, պետք է փաստել, որ այդ տեսությունը հիմնված է այն գաղափարի վրա, որ այս շրջանակի գործերն օրենսդիրն առանձնացնում է ոչ թե հանցագործությամբ խախտված, վնասված հանրային շահը վերականգնելու նպատակից ելնելով, այլ հանցանքից տուժած անձի մասնավոր շահի բավարարման նպատակով: Այս տեսության էությունից բխում էր, թե նշված գործերով արարքն ընդհանրապես հանրային շահ չի վնասվում, ըստ այդմ էլ՝ արարքը պատժելի է ոչ թե հանրային շահի բավարարման, այլ տուժողի ներքին «բավարարման» համար: Սակայն հենց այդ տեսության էությունն էլ «խարխլում է» տվյալ տեսության հիմքերը: Այն հանցագործության ժամանակակից պատկերացումներից խիստ հեռու ընկալումների վրա է հիմնված: Նման մոտեցումը ոչ միայն չի համապատասխանում ներկա ժամանակների՝ հանցագործության՝ հանրորեն վտանգավոր արարք լինելու պատկերացումներին, այլ նույնիսկ դեռևս մեկ հարյուրամյակ առաջ է գնահատվել իբրև անախրոնիզմ (ժամանակավրեպություն)<sup>11</sup>: Ներկա ժամանակներում հանցանքի հանրային վտանգավորության հատկանիշը (հետևաբար՝ դրանով հանրային շահը վնասվելու հանգամանքը) գրականության մեջ դիտարկվում է իբրև «կասկած չհարուցող»<sup>12</sup>, իբրև արարքի քրեականացման հիմք (սկզբունք)<sup>13</sup>՝ միաժամանակ ընդգծելով այս հարցում հանրային վտանգավորության «բացառիկ բնույթը»<sup>14</sup>:

Հետևաբար՝ բոլոր այն դեպքերում, երբ արարքը «չի վնասում» կամ «գրեթե չի վնասում» հանրային շահը, այդ արարքը ոչ թե պետք է ընդգրկվի «մասնավոր մեղադրանքի գործերի» շարքում, այլ ապաքրեականացվի:

---

Քրեական օրենսգրքի նախագծային այդ դրույթը, և քրեական դատավարության բացառությունները կիրարկելու հնարավոր նյութաիրավական խոչընդոտները վերացվեցին:

Այս առումով ուշադրության է արժանի նաև Տ.Ղազարյանի տեսակետը, ով, անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծային կարգավորմամբ առաջարկվող մասնավոր մեղադրանքի մոդելին, քրեաիրավական հարաբերությունների ծագումը այդպիսի կարգավորման դեպքում փաստացի պայմանավորում է տուժողի կողմից դատարան քրեական հայց ներկայացնելով: Տե՛ս Տ.Ղազարյան, Մասնավոր մեղադրանքի գործերով քրեական վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրները //ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու 2 (2) 2018, Երևան 2019, էջ 285:

<sup>11</sup> Տե՛ս, օրինակ, Таубер Л. Я., Жалоба потерпевшего при преступлениях неофициальных. Харьков: Тип. и лит. М. Зильберг и сыновья, 1909, էջ 350-351: Գերմանացի գիտնականներ Ռ.Գնեյստը և Ֆ. Հոլցենդորֆն այս առումով դեռևս 1800-ականների վերջերում գրված իրենց աշխատություններում նկատում էին, որ տուժողին քրեական հայցի իրավունք վերապահելը վերջինիս բավարարության համար ոչ այլ ինչ է, քան քրեական իրավունք միջնադարյան գաղափարի ներմուծում, տե՛ս Полянский Н.Н. К вопросу об участии частных лиц в публичном обвинении (Принципиальная основания actio popularis в уголовном процессе), 1915, էջ 11. (<http://jurytrial.ru/media/files/library/file30.pdf>):

<sup>12</sup> Տե՛ս Գաբրուզյան Ա.Հ. «Հանցանք» հասկացության օրենսդրական բնորոշման որոշ հարցեր // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; գլխ. խմբ. Ղազինյան Գ.Ս.-Երևան, ԵՊՀ, 2017, էջ 505:

<sup>13</sup> Տե՛ս Коляхин В. П., Теоретические основы построения Общей части российского уголовного права. СПб., Юрид. центр пресс, 2002, էջ 348 :

<sup>14</sup> Տե՛ս, օրինակ, Մարկոսյան Մ.Ս., Քրեականացման և ապաքրեականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, Լիմուշ, 2011, էջ 97:

### **Միջանկյալ առաջարկներ.**

Այսպիսով, պետք է փաստել՝ «մասնավոր մեղադրանքի գործերով» մեղադրանքի կազմակերպման քր.դատ.օր.-ով նախատեսված մոդելն իր կառուցվածքով «խիստ մոտ է» «մասնավոր դելիկտի» տեսության գաղափարներից բխող հետևություններին (որը, ինչպես ներկայացվեց վերևում, արժանի է խիստ քննադատության և ժամանակավրեպ է): Հետևաբար՝ «մասնավոր դելիկտի» տեսությունից բխող այս մոդելում առկա **վերոթվարկյալ կարգավորումները** պետք է ենթարկել համակարգային փոփոխության՝ մինչ մասնավոր մեղադրանքի վարույթը կանոնակարգող քր.դատ.օր.-ի 54-րդ գլխի ուժի մեջ մտնելը:

### ***3.Ներդրվող մասնավոր մեղադրանքի մոդելի քննադատական վերլուծությունը՝ հանցագործությունից տուժած անձի իրավունքների ու օրինական շահերի ապահովման լույսի ներքո***

Հանցագործությունից տուժած անձինք, որպես կանոն, չեն ունենում հատուկ մասնագիտական (իրավական) գիտելիքներ, սակայն նրանց վրա, առանց տարբերակման, դրված է մեղադրանքի (քրեական հայցի) պաշտպանության նույնպիսի պարտականություն, ինչ իրավաբան դատախազի վրա՝ հանրային մեղադրանքի գործերով:

Ավելին, տուժած անձին հակադրվելու է պաշտպանության կողմը. քր.դատ.օր.-ով նախատեսված մեծաթիվ դեպքերում հանդես է գալու պրոֆեսիոնալ իրավաբանը (պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքեր): Թերևս, հենց այս հանգամանքների հաշվառմամբ է, որ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգում (հայեցակարգի 5.8-րդ կետ) նշվում էր, թե պետք է հաշվի առնվեն կատարված հանցագործությամբ ներկայացված քրեական հայցը պաշտպանելու տուժողի **ունակությունն ու հնարավորությունները**, սակայն քր.դատ.օր.-ում այս առումով մեխանիզմներ նախատեսված չեն<sup>15</sup>:

Այս առնչությամբ պետք է նկատել, որ թեև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ կամ Դատարան), ընդհանուր առմամբ, Մարդու

<sup>15</sup> Թերևս միակ բացառությունը քր.դատ.օր.-ի 11-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում հանրային հետապնդման կարգով քրեական հետապնդման հնարավորություն նախատեսելն է, որով, սակայն, հաշվի չեն առնվում մի շարք այլ իրավիճակներում տուժողի՝ որպես հիմնական մասնավոր մեղադրող հանդես գալու ունակություններն ու հնարավորությունները, այս մասին մանրամասն կլիտավի ստորև:

իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) խախտում չի համարում այն հանգամանքը, որ որոշ գործերով մեղադրանքը կարող է կազմակերպված լինել մասնավոր մեղադրանքի կարգով (խոսքը, մասնավորապես, հիմնական և սուբսիդիար մասնավոր մեղադրանքի տեսակների մասին է)<sup>16</sup>՝ շեշտելով, որ Կոնվենցիան չի պահանջում միայն պետական մեղադրանքի կազմակերպում<sup>17</sup>, սակայն որոշ դեպքերում, հաշվի առնելով առանձին հանգամանքներ և կարգավորումներ (կամ դրանց բացակայությունը), Դատարանը, փաստացիորեն անդրադառնալով մասնավոր մեղադրանքի գործերով պետական մեղադրանքի իրականացման հնարավորության բացակայությանը և մեղադրանքը բացառապես հիմնական մասնավոր մեղադրանքի ձևով կազմակերպման հարցերին (ստորև մեջբերվող դեպքում հարցը քննարկելով ընտանեկան բռնության համատեքստում), նկատել է, որ այդպիսի կարգավորումները «(...) կարող են Կոնվենցիայի հետ համատեղելիության հարցեր առաջացնել»<sup>18</sup>: Ավելին, Բևաքուան և Ս-ն ընդդեմ Բուլղարիայի գործով Դատարանը, նաև այլ հանգամանքների հաշվառմամբ,<sup>19</sup> ընդգծել է, որ *տուժողի կողմից մասնավոր մեղադրանք հարուցելու իրավասությունը վերջինիս իրավունքների*

<sup>16</sup> «Լրացնող» կարող է բնորոշվել հանցանքից տուժողի (նրա մերձավոր ազգականների և այլն) կողմից իրականացվող այն մասնավոր մեղադրանքը, որը ծագում, իրացվում և դադարում է «հիմնական» հանրային (պետական) մեղադրանքին զուգահեռ և գտնվում է նրանից կախվածության (ստորադասության) մեջ:

«Սուբսիդիար» կարող է բնորոշվել այն մասնավոր մեղադրանքը, որը ծագում և իրացվում է հանցանքից տուժողի (նրա մերձավոր ազգականների և այլն) կողմից՝ հանրային (պետական) քրեական հետապնդում իրականացնող մարմնի (քրեական վարույթի մասնակցի) կողմից քրեական հետապնդում չհարուցելու կամ դրանից հրաժարվելու (այն դադարեցնելու) դեպքում:

<sup>17</sup> Տե՛ս, օրինակ, Sandra Janković v. Croatia, գործով 05.03.2009թ. վճիռը, գանգատ թիվ 38478/05, կետ 50): Ավելին, ՄԻԵԴ-ը համանման դիրքորոշում է արտահայտել նույնիսկ ընտանեկան բռնության գործերով, (սրանց առնչությամբ ՄԻԵԴ-ը բազմից ընդգծել է ընտանեկան բռնության զոհերի խոցելիությունը և նրանց պաշտպանության գործում պետության ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը (տե՛ս, օրինակ, Hajduová v. Slovakia գործով 30.11.2010թ. վճիռ, գանգատ թիվ 2660/03, կետ 46)), որի առնչությամբ անդրադառնալով քննարկվող հարցին՝ Դատարանը նշել է, որ չի կարող համաձայնվել դիմումատուի այն պնդմանը, թե նրա կոնվենցիոն իրավունքները կարող են ապահովվել միայն այն դեպքում, երբ քաղաքացի Ն-ն (ենթադրյալ բռնարար ամուսինը՝ Կենտրոն) հետապնդվեր պետության կողմից, և որ Կոնվենցիան ընտանեկան բռնության բոլոր դեպքերով տուժողի կողմից իրականացվող մեղադրանքի փոխարեն, պահանջում է պետական մեղադրանք (տե՛ս Bevacqua and S. v. Bulgaria գործով 12.06.2008թ. վճիռը, գանգատ թիվ 71127/01, կետ 82):

<sup>18</sup> Դատարանը նշել է, թե «չի բացառում, որ բուլղարական համապատասխան կարգավորումները, համաձայն որոնց ընտանիքի անդամների միջև լուրջ բռնության ակտերը չեն կարող առանց զոհի ակտիվ ներգրավվածության հետապնդվել դատական կարգով, որոշակի հանգամանքներում կարող են Կոնվենցիայի հետ համատեղելիության հարցեր առաջացնել (տե՛ս Bevacqua and S. v. Bulgaria վճիռի 82-րդ կետ): Մասնավորապես՝ քննարկվող գործում բուլղարական օրենսդրությամբ տուժողի ամուսնու, ծնողի, երեխայի, եղբոր կամ քրոջ կողմից դիտավորությամբ վերջինիս առողջությանը միջին ծանրության մարմնական վնասվածքներ հասցնելու արարքներով մեղադրանքը փաստացիորեն կազմակերպված է եղել հիմնական մասնավոր մեղադրանքի ձևով՝ բացառելով պետական մեղադրանքի փոխակերպման (դատախազի ներգրավման) հնարավորությունը, և այստեղ այդպիսի արարքները կարող էին հետապնդվել միայն տուժողի կողմից մասնավոր մեղադրանքի կարգով: Ավելին, այդ գործերով վարույթը ենթակա էր կարճման, երբ տուժողը կանչվելու դեպքում չի ներկայանում կամ հրաժարվում է մեղադրանքից (գործից) (բուլղարական օրենսդրական համապատասխան կարգավորումները մանրամասն ներկայացված են Bevacqua and S. v. Bulgaria գործով 12.06.2008թ. վճիռի 44-46-րդ կետերում:

<sup>19</sup> Որպես այդպիսիք դատարանի կողմից դիտարկվել են համապատասխան ժամանակաշրջանում բռնության, մասնավորապես՝ ընտանեկան բռնության դեպքերում բուլղարական օրենսդրությամբ վարչական և ոստիկանական հատուկ միջոցներ նախատեսված չլինելը, մանրամասն տե՛ս Bevacqua and S. v. Bulgaria վճիռի 83-րդ կետ:

արդյունավետ պաշտպանության բավարար միջոց չի կարող հանդիսանալ<sup>20</sup>: Արդեն ավելի ուշ՝ 2019թ., ընտանեկան բռնության համատեքստում, անդրադառնալով մասնավոր մեղադրանքի հարցերին, Դատարանը նկատում է, որ «(...) *ապացույցների հավաքումն օբյեկտիվ բարդությունների հետ է կապվում այն դեպքերում, երբ դաժան վերաբերմունքը տեղ է գտնում վկաների բացակայության պայմաններում և երբեմն չի թողնում տեսանելի (նյութական) հետքեր*: Դատարանը համաձայն է այն բանի հետ, որ *նույնիսկ իրավապահ մարմինների հատուկ պատրաստված աշխատակիցների համար դա ոչ հեշտ աշխատանք է, իսկ զոհի համար (...) դժվարությունները դառնում են անհաղթահարելի»*<sup>21</sup> (ընդգծումները՝ Կենտրոնի): Թեև կոնկրետ դեպքում Դատարանը հարցին անդրադառնում է ընտանեկան բռնության համատեքստում, և խոսքը, մասնավորապես, այն զոհի մասին է, ով հարկադրված է ապացույցները հավաքել՝ «շարունակելով հանցագործի հետ մի տանիքի տակ ապրել, լինելով վերջինիցս ֆինանսական կախվածության մեջ ու վախենալով նրա կողմից վրեժխնդրությունից», այնուամենայնիվ, կարծում ենք, որ այդպիսի անհաղթահարելի դժվարություններ անձի համար կարող են առաջանալ ոչ միայն ընտանեկան բռնության, այլ մի շարք այլ դեպքերում, օրինակ՝ երբ անձը, թեև ֆինանսապես ենթադրյալ հանցագործից կախված չէ, բայց գտնվում է ոչ բավարար ֆինանսական վիճակում, որպեսզի հնարավորություն ունենա վարձել պրոֆեսիոնալ իրավաբան, չունի բավարար գիտելիքներ (այդ թվում՝ իրավաբանական) կամ անգրագետ է, չունի քրեական հայցը պաշտպանելու բավարար ժամանակ (պայմանավորված, օրինակ, աշխատանքային

<sup>20</sup> Քանի որ ակնհայտ է, որ այդպիսի վարույթը ժամանակ է պահանջում և չի կարող այդպիսի կրկնվող միջադեպերի կանխարգելմանը ծառայել, մանրամասն տե՛ս u Bevacqua and S. v. Bulgaria վճռի 83-րդ կետ:

<sup>21</sup> Տե՛ս u Volodina v. Russia գործով 0.07.2019թ. վճիռը, գանգատ թիվ 41261/17, կետ 82:

ծանրաբեռնվածությամբ), գործով բացակայում են վկաներ (կոնկրետ իրավիճակում, օրինակ, դժվար է ձեռք բերել փաստական տվյալներ)<sup>22</sup> և այլն<sup>23</sup>:

Ավելին, քր.դատ.օր.-ի կարգավորումներով շատ դեպքերում այդ «դժվարությունները» էլ ավելի են բարդանում նրանով, որ.

- ✓ մասնավոր մեղադրանքի գործերի շարքում այնպիսի հանցանքներ են ներառված, որոնք նույնիսկ պրոֆեսիոնալ իրավաբան քննիչի, դատախազի կողմից խիստ դժվար ապացուցելի են (օրինակ՝ քր.օր.-ի 255-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված խարդախությունը, քր. օր.-ի 264-րդ հոդվածով նախատեսված գույքը ոչնչացնելը կամ վնասելը ու մի շարք այլ հանցանքներ): Կամ թե՛ ինչպե՞ս է մասնավոր անձն ապացուցելու համակարգչային հափշտակությունը (քր.օր.-ի 257-ի առաջին մասով նախատեսված այս արարքը, որը նույնպես դասվում է «մասնավոր մեղադրանքի գործերի» շարքին), հարցը թերևս պատասխան չի պահանջում:
- Նույնիսկ այն դեպքում, երբ ինչ-ինչ նպատակահարմարությունից ելնելով՝ մասնավոր մեղադրանքի գործերով մեղադրանքը որոշվում է կազմակերպել միայն «հիմնական» մասնավոր մեղադրանքի կարգով, անհրաժեշտ է, որ ընտրվեն, ընդհանուր առմամբ, հեշտ ապացուցվող և խիստ սակավ գործեր: Դրանով հնարավոր կլիներ խուսափել մասնավոր մեղադրողի դժվարությունը «անհաղթահարելի» դարձնելուց, ինչը, սակայն, նոր

<sup>22</sup> Մարդու իրավունքների եվրոպական դատարանը համանման հանգամանքները (թեև նույնպես հարցը ընտանեկան բռնության կոնտեքստում քննարկելով) Բառսովան ընդդեմ Ռուսաստանի գործով, ըստ էության, դիտարկել է իբրև տուժողի վրա «չափազանց ծանր բեռ» դնել: Տվյալ գործով Դատարանը հաշվի է առել այն հանգամանքը, որ դիմումատուն մասնավոր մեղադրանքի վարույթի շրջանակներում չի ունեցել *պետական մարմինների օժանդակությունից* օգտվելու հնարավորություն, որ *ոչ մի ռատիկան նրան չի օժանդակել ապացույցներ հավաքելու, ոչ մի դատախազ նրան չի օժանդակել իր շահերի պաշտպանության համար իրավաբանական փաստաթղթերի կազմման կամ դատարանում նրա իրավունքների պաշտպանության գործում՝ միաժամանակ արձանագրելով, որ* ռուսական օրենսդրությամբ տուժողը (կոնկրետ դեպքում՝ ընտանեկան բռնության զոհը) *գրկված է անվճար իրավաբանական օգնության հնարավորությունից*, հետևաբար՝ տվյալ դեպքում տուժողի վրա է ընկել իր ներկայացուցչության ծախսերը հօգալու խնդիրը: Այս ամենին գումարած այն, որ տուժողը ստիպված է եղել ընդմիջել աշխատանքը ու երեխային խնամելու գործը դատական լուծմանին մասնակցելու համար և որ իրավախախտի նկատմամբ քրեական վարույթի հարուցումն *ամբողջովին կախված է եղել տուժողի՝ իրավախախտին պատասխանատվության կանչելու տոկոսությունից և վճարականությունից: Դատարանն այդպիսի հանգամանքները կոնկրետ դեպքում դիտարկել է իբրև տուժողի վրա դրված «չափազանց ծանր բեռ»* (տե՛ս Barsova v. Russia գործով 22.10.2019թ. վճիռը, գանգատ թիվ 20289/10, կետեր 33-34): Համանման մտահոգություններ հնչել են նաև տեսական գրականության մեջ, տե՛ս, օրինակ, Головачук О.С. Частное обвинение в уголовном процессе, дис. ... канд. юрид. наук, Екатеринбург, 2001, էջ 36-37):

<sup>23</sup> Այստեղ մեր ընդդիմախոսները կարող են նկատել, որ բոլոր թվարկված իրավիճակները կարող են գնահատվել իբրև տուժողի «կախյալ կամ անօգնական վիճակ», ինչը թույլ կտա արդեն քր.դատ.օր.-ի 11-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով մեղադրանքը հանրային կարգով իրականացնել: Սակայն «կախյալ կամ անօգնական վիճակի» այդպիսի լայն գնահատումը իր հերթին կհանգեցնի նրան, որ այս գործերով բացառությունը կդառնա կանոն, իսկ կանոնը՝ բացառություն վերացնելով գրեթե բոլոր դեպքերը, երբ մասնավոր անձը մասնավոր մեղադրանքի գործերով հանդես կգա իբրև հիմնական մասնավոր մեղադրող՝ իրականացնելով քրեական հետապնդում: Քրեական դատավարության գիտության մեջ «կախյալ վիճակ» ընդունված է համարել տուժողի նյութական կամ այլ կախվածությունը հանցանք կատարած անձից, իսկ «անօգնական վիճակում» գտնվողների շարքին դասվում են առավելապես ծանր հիվանդներն ու զառամյալները, մանկահասակ երեխաները, անձինք, որոնք տառապում են այնպիսի հոգեկան խանգարումներով, որ նրանց գրկում են իրականությունը ճիշտ ընկալելու հնարավորությունից (տե՛ս Курс уголовного процесса / Под ред. д.ю.н., проф. Л.В. Головки, - 2-е изд., испр. - М.: Статут, 2017, էջ 1024):

կարգավորումներով «մասնավոր մեղադրանքի գործերի» ցանկի պարզ ընթերցումից երևում է, որ չի արվել<sup>24</sup> :

✓ Մյուս խնդիրը, որ առաջանում է քր.դատ.օր.-ի կարգավորումներով, որով տուժողն է՝ լավելի անբարենպաստ վիճակում է դրվում, պայմանավորված է այն հանգամանքով, որ քր.դատ.օր.-ի կարգավորումներով թեև մասնավոր մեղադրանքի գործերով վարույթը տարբերակվել է (տուժողն ունի քրեական հայցի (դրանից հրաժարվելու) իրավունք և այլն), այնուամենայնիվ, նույնիսկ այդպիսի տարբերակված վարույթը, մեծամասամբ, շարունակվում է իր էությամբ մնալ «խառը» դատավարություն:

• Այս տարբերակված վարույթը, չկառուցելով մրցակցային («ձևի և բովանդակության միահյուսման» տեսության) գաղափարների վրա և այդ վարույթի վրա վերաբերելի մասով տարածելով վարույթի ընդհանուր կանոնները (քր.դատ.օր.-ի 454-րդ հոդվածի 1-ին մաս, 455-րդ հոդվածի 1-ին մաս), քր.դատ.օր.-ով նաև մասնավոր մեղադրանքի գործերով վարույթում *պահպանել են այնպիսի կանոններ ու ինստիտուտներ, որոնք ուղղված են պաշտպանության կողմին՝ իբրև դատավարության առավել թույլ կողմին իրավունքների մեխանիկական հավասարությունից զատ հավելյալ իրավունքներով ու երաշխիքներով օժտելուն*: Այլ խոսքով՝ քր.դատ.օր.-ի մոդելում տեղ է գտել քրեադատավարագիտությանը հայտնի *favor defensionis դատավարական կառուցվածքը՝ իր բազմաթիվ դրսևորումներով* (անմեղության կանխավարկած, մեղադրանքի կողմի վրա ապացուցման բեռը դնելը (onus probandi), բոլոր կասկածները հոգուտ մեղադրյալի (կասկածյալի) (*in dubio pro reo*) մեկնաբանման կանոնը, վերջին խոսքի իրավունքը և այլն<sup>25</sup>): Սակայն, օրենսդիրն այդպիսի կարգավորմամբ հաշվի չի առել մի կարևորագույն հանգամանք. *favor defensionis* դատավարական կառուցվածքն ունի դատավարության *a priori* թույլ կողմ հանդիսացող *պաշտպանության կողմին* լրացուցիչ միջոցներով (իրավունքներ, երաշխիքներ,

<sup>24</sup> Համեմատության համար նշենք, որ մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի քր.դատ.օր.-ի կարգավորման մոդել կամ դրան մոտ մոդել ունեցող երկրներում խիստ սակավ են հիմնական մասնավոր մեղադրանքի կարգով հետապնդվող գործերի շրջանակը: Օրինակ՝ ՌԴ քր.դատ.օր.-ի 20-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է մասնավոր մեղադրանքի կարգով հետապնդվող ընդամենը 3 հանցագործություն, ընդ որում՝ այնպիսի հանցագործություններ, որոնց ապացուցելն ինքին որպես այդպիսին բարդություն չի ներկայացնում (այդպիսիք են ՌԴ քր.օր.-ի 116.1 (ծեծը, որը կատարվել է համանման արարքի համար վարչական պատասխանատվության ենթարկված անձի կողմից), 128.1-րդ հոդվածի առաջին մասը (գրպարտություն), 115-րդ հոդվածի առաջին մասը (առողջությանը դիտավորությամբ թեթև վնաս պատճառելը): Բսկ ահա նոր քր.օր.-ով մասնավոր մեղադրանքի կարգով հետապնդվող հանցանքների շարքը ոչ միայն ավելացել է՝ ի համեմատ գործող քր.դատ.օր.-ի կարգավորմամբ նախատեսված մասնավոր մեղադրանքի գործերի (քր.օր.-ով 15-րդ հոդվածով սահմանված են մասնավոր մեղադրանքի կարգով հետապնդվող թվով 27 հանցանք), այլև այստեղ տեղ են գտել հանցանքներ, որոնց ապացուցելը տուժողի կողմից շատ դեպքերում կլինի գրեթե անհնար (դրանցից մի քանիսն արդեն իսկ թվարկվեց վերևում):

<sup>25</sup> Գիտության մեջ թվարկվածները դիտարկվում են *favor defensionis* դատավարական կառուցվածքի մասնավոր արտահայտություններ (տարրեր), մանրամասն տե՛ս Михеенкова М.А., Благоприятствование защите (favor defensionis) и его проявление в современном уголовном процессе, дис. ... канд. юрид. наук, М., 2012, էջ 60-78:

պարտականությունից ազատում) օժտելու նպատակ, որը չի կարող փոխարինվել նրանց իրավունքների մեխանիկական հավասարեցմամբ: Պաշտպանության կողմը, սակայն, իբրև ի սկզբանե «թույլ» կողմ կարող է դիտարկվել, երբ նրան հակադրվում է մեղադրանքի կողմը՝ ի դեմս պետության<sup>26</sup>: *Իսկ այն դեպքում, երբ մեղադրանքն ու պաշտպանությունն իրականացնում են մասնավոր մասնակիցներ, չի կարելի խոսել կողմերի՝ a priori անհավասարության մասին: Հետևապես՝ այստեղ favor defensionis դատավարական կառուցվածքը չպետք է տեղ գտնի, քանի որ այս պարագայում արդեն այն կիսադառն թե դատավարության «անհավասար կողմերը փաստացի հավասարեցնելու» դեր, այլ հակառակը՝ ի սկզբանե հավասար կողմերին կդարձնի անհավասար՝ լրացուցիչ հավելյալ իրավունքներ ու երաշխիքներով օժտելով պաշտպանության կողմին, ինչը, վերոթվարկյալ հանգամանքների հետ մեկտեղ, մասնավոր մեղադրողի վրա դրված մեղադրանքի պաշտպանության պարտականությունը կդարձնի «անհաղթահարելի դժվարություն»:*

### *Միջանկյալ եզրահանգում.*

Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ

- մասնավոր մեղադրանքի վարույթով քր.դատ.օր.-ի այսօրինակ կարգավորումները տուժողի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար ստեղծում են, ըստ էության, «անհաղթահարելի դժվարություններ», ուստի՝
- կա՛մ պետք է այս գործերով վերացվի քր.դատ.օր.-ի առաջարկվող մեղադրանքի կազմակերպման մոդելը, և մեղադրանքը կազմակերպվի ոչ թե հիմնական մասնավոր մեղադրանքի, այլ հիմնական պետական (հանրային) մեղադրանքի կարգով, կա՛մ,
- եթե որոշվում է պահպանել մեղադրանքի կազմակերպման այս մոդելը, ապա տարբերակված վարույթում տեղ գտած կանոնակարգումները պետք է փոփոխվեն՝ տարբերակված վարույթում վերացնելով favor defensionis դատավարական կառուցվածքը (իր բոլոր դրսևորումներով), ինչպես նաև մասնավոր մեղադրանքի գործերը նեղացնելով՝

<sup>26</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Курс уголовного процесса / Под ред. д.ю.н., проф. Л.В. Головки, - 2-е изд., испр. -М.: Статут, 2017, էջ 368-369):

այնտեղ ներառելով համեմատաբար «հեշտ ապացուցելի»<sup>27</sup> հանցագործություններ<sup>28</sup>, բացի այդ,

- պետք է նախատեսվեն կառուցակարգեր տուժողի մեղադրանքը (քրեական հայցը) պաշտպանելու ունակությունն ու հնարավորությունները գնահատելու, նման հնարավորությունների բացակայության դեպքում, պետք է ապահովել վարույթի հանրային մասնակցի (դատախազ) ներգրավումը վարույթին:

---

<sup>27</sup> Այս առումով որպես ուղենիշ կարող է ծառայել Ղազախստանի Հանրապետության քր.դատ.օր-ի 32-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մասնավոր մեղադրանքի գործերի շրջանակը, որտեղ ընդգրկված 12 հանցանքն ապացուցման առումով մեծ բարդություններ չեն առաջացնի:

<sup>28</sup> Ինչպես արդեն բազմիցս նշվել է, բոլոր դեպքերում պետք է այս գործերով նախատեսվի վարույթին հանրային մեղադրողի ներգրավման հնարավորություն, ինչը բացառվում էր միայն «մասնավոր դելիկտի» տեսության դեպքում:

**4. Քրեական դատավարության օրենսգրքով մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի ներդրվող մոդելով նախաքննության ծանրաբեռնվածությունը բեռնաթափելու նպատակի իրագործելիությունը.**

Մասնավոր մեղադրանքի այս մոդելի ներդրման նպատակն է եղել, ինչպես նշվում էր դեռևս Քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգում, «գործի քննության ծանրությունը» դատարան տեղափոխելը, այլ կերպ ասած՝ նախաքննության «բեռնաթափումը»: Սակայն ներդրվող մոդելով անգամ մասնավոր մեղադրանքի գործերով նախաքննության բեռնաթափման նպատակին հասնել չի լինում, կամ առնվազն ցանկալի բեռնաթափման աստիճանի, այդ թվում նաև՝ օբյեկտիվ պատճառներով:

Բանն այն է, որ մասնավոր մեղադրանքի այս մոդելի գործարկման համար անհրաժեշտ է ենթադրյալ հանցանք կատարած անձի հայտնի լինելը (քր.դատ.օր.-ի 451-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ), իսկ այն դեպքում, երբ նա հայտնի չէ, օրենսդիրն իրավաչափորեն սահմանել է տվյալ գործերով մինչդատական վարույթի իրականացման հնարավորություն՝ ենթադրյալ հանցանք կատարած անձին հայտնաբերելու նպատակով<sup>29</sup> (քր.դատ.օր.-ի 451-րդ հոդվածի 5-րդ մաս):

- Կարծում ենք, որ ներկայիս իրավակիրառ պրակտիկայի պայմաններում հնարավոր է ձևավորվի այնպիսի ընկալում, որ հանցանք կատարած անձը «հայտնաբերված» համարվի այն դեպքում, երբ նախաքննության ընթացքում հավաքվել են ապացույցներ, որոնք վկայում են կոնկրետ անձի կողմից հանցանքի կատարման մասին, այլ կերպ ասած՝ ձևավորվել է քրեական հետապնդման հարուցման հիմքը<sup>30</sup>:
- Ավելին, այն պարագայում, երբ քր.դատ.օր.-ով տուժողն է կրում քրեական հայցում ներկայացված մեղադրանքն ապացուցելու պարտականություն (քր.դատ.օր.-ի 455-րդ հոդվածի 2-րդ մաս), գործնականում հնարավոր է, որ տուժողներն «ապացուցման իրենց

<sup>29</sup> Հիշատակման է արժանի այն, որ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքում, մինչ 2007թ., առկա էր կարգավորում, ըստ որի՝ մասնավոր մեղադրանքի գործերով բոլոր այն դեպքերում, երբ հանցանք կատարած անձն անհայտ էր, տուժողն ինքն էր փաստացի կրում նրան բացահայտելու պարտականությունը, և օրենսգրքը չէր նախատեսում ենթադրյալ հանցանք կատարած անձի բացակայության պայմաններում նախաքննության կատարման հնարավորություն: Այսպիսի կարգավորումը ՌԴ Սահմանադրական դատարանի՝ 27.06.2005թ. թիվ 7-Պ որոշմամբ գնահատվել է իբրև անձի դատական պաշտպանության իրավունքը խախտող, և հետևաբար՝ ՌԴ քր.դատ.օր.-ի կարգավորումներն այն մասով, որոնցով դրանք չեն պարտադրում դատախազին, քննիչին, հետաքննության մարմնին և հետաքննիչին մասնավոր մեղադրանքի գործերով հանցանքից տուժած անձի հաղորդումն ընդունելու և հանցանքի մեջ մեղավոր անձի պարզման և նրան քրեական դատավարության կարգով քրեական պատասխանատվության ներգրավվելու միջոցներ ձեռնարկելու, ճանաչվեցին ՌԴ սահմանադրությանը հակասող:

<sup>30</sup> Այն, որ պետք է ձևավորվի քրեական հետապնդում հարուցելու հիմքը, որպեսզի խոսենք «հանցանք կատարած անձին» հայտնաբերելու մասին, պարզ է դառնում նաև քր.դատ.օր.-ի 13-րդ հոդվածի 5-րդ մասի ձևակերպումից, որտեղ նշվում է «քրեական հետապնդման ենթակա» ենթադրյալ հանցանք կատարած անձին հայտնաբերելու մասին:

ծանր բեռը» թոթափելու համար «օգտվեն» հանցանք կատարած անձի՝ իբր իրենց «հայտնի չլինելու» հանգամանքից, որպեսզի հանրային մասնակիցներն «իրենց փոխարեն» հավաքեն ապացույցներ:

Այս պարագայում ստացվում է, որ նախաքննությունը գործարկվելու է, ծախսվելու են **ռեսուրսներ, այնուհետ՝ դադարեցվելու է**, և արդյունքում դեռ տուժողն է որոշելու՝ հարուցի՞ քրեական հայց, թե՛ ո՛չ:

- Մյուս կողմից՝ հնարավոր են դեպքեր, երբ քրեական վարույթը ենթադրյալ հանրային հետապնդման հանցագործության առթիվ հարուցելուց հետո հետագա քննության ընթացքում պարզվի, որ պետք է արարքը վերադարձնել, ինչի արդյունքում փոխվում է հետապնդման ձևը՝ հանրայինից մասնավորի: Այս պարագայում էլ հանրային մարմինները պետք է դադարեցնեն քրեական հետապնդումը, կարճեն քրեական վարույթը:

Եվ այդ դեպքերում հարց է առաջանում. *եթե արդեն իսկ նախաքննության մարմնի ռեսուրսները ծախսվել են (օբյեկտիվ, թե սուբյեկտիվ պատճառներով), ապա ո՞րն է դառնում քրեական վարույթը կարճելու նպատակը* (չէ՞ որ մասնավոր մեղադրանքի՝ քր.դատ.օր.-ով ներդրվող մոդելն ուներ նախաքննության ծանրաբեռնվածության թոթափման նպատակ):

- «Նախաքննության բեռնաթափմանը» ոչ մի կերպ «չի նպաստում» նաև «մասնավոր մեղադրանքի գործերի» ընտրված շրջանակը. այստեղ տեղ են գտել այնպիսի հանցագործություններ, որոնցով եթե ոչ բոլոր դեպքերում, ապա առնվազն դեպքերի մեծամասնությունում «պահանջվելու է» վարույթի հարուցում հանրային կարգով (տեղ է գտնելու նախաքննությունը), և միայն հարուցված գործի շրջանակներում է փաստվելու, որ կոնկրետ դեպքում առկա է ոչ թե հանրային, այլ մասնավոր մեղադրանքով հետապնդվող արարք: *Այսինքն՝ ընտրված են այնպիսի հանցանքներ, որոնց առկայության մասին կարելի է խոսել միայն այլ հանցանքների կատարման փաստը հերքելուց հետո:* Օրինակ՝ անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառել (քր.օր.-ի 172-րդ հոդված) հանցագործության կատարման մասին կարելի է խոսել, երբ վարույթ հարուցվի ու նախաքննություն իրականացվի առողջությանը ծանր վնաս պատճառելու (քր.օր.-ի 166-րդ հոդված) հանցագործության փաստի առթիվ և նախաքննությամբ հերքվի դիտավորությամբ այդպիսի վնաս հասցնելու հանգամանքը: Մասնավոր մեղադրանքի կարգով հետապնդվող
- ✓ «Առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը հոգեկան խիստ հուզմունքի վիճակում» (քր.օր.-ի 168-րդ հոդված),

- ✓ «Առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ» (քր.օր-ի 169-րդ հոդված),
- ✓ «Մարդու իմունային անբավարարության վիրուսով անզգուշությամբ վարակելը» (քր.օր-ի 178-ի առաջին մասով նախատեսված հանցանքը),  
այս և մի շարք այլ հանցանքներն իրենց էությամբ այնպիսին են, որ անհնար է ի սկզբանե, առանց ենթադրյալ այլ հանցանքի փաստով վարույթ հարուցելու եզրահանգում անել միայն հենց տվյալ հանցանքների կատարման մասին, և վարույթ սկսել միանգամից տուժողի կողմից դատարան քրեական հայց ներկայացնելով: Ուստիև, ըստ առկա օրենսդրական կարգավորումների, այս դեպքում վարույթը հարուցելուց հետո, երբ արարքի վերավորակման արդյունքում այն դասվի մասնավոր մեղադրանքի գործերի (հանցանքների) շարքում, ապա պետք է հարուցված վարույթը կարճվի (հետապնդումը դադարեցվի), որից հետո նոր միայն մասնավոր մեղադրանքի կարգով քրեական հայց հարուցվի՝ ապարդյուն վատնելով նախաքննական **արդեն իսկ ծախսված** ռեսուրսները:

Եզրահանգումներ, առաջարկներ, եզրակացություն.

Եզրահանգումներ.

Այսպիսով՝ պետք է փաստել, որ.

- ✓ մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի ներդրվող մոդելով դրա նպատակին հասնել՝ հանրային մեղադրանքի միջոցները խնայել, նախաքննությունը բեռնաթափել, օբյեկտիվորեն հնարավոր է լինելու ոչ բոլոր դեպքերում:
- ✓ Ավելին, քր.դատ.օր-ի կարգավորումները, ըստ որոնց հանրային կարգով հարուցված վարույթները պետք է կարճվեն (հետապնդումը դադարեցվի), երբ պարզվի, որ դրանք մասնավոր մեղադրանքի կարգով են ենթակա հետապնդման, փաստացի խաղալու են հանրային մեղադրանքի միջոցների անհարկի վատնման դեր. այսինքն՝ դրանք այնպիսին են, որ ոչ թե հեշտացնելու են ներդրվող մոդելի նպատակի իրագործելիությունը, այլ տրամագծորեն հակառակ դեր են կատարելու՝ բարդացնելու կամ անհնար են դառնալու նպատակի հասանելիությունը:

Առաջարկներ

- ✓ Հետևաբար՝ գտնում ենք, որ եթե նույնիսկ որոշվի պահպանել քր.դատ.օր-ի քննարկվող մոդելը, ապա առնվազն այն դեպքերի համար, երբ քրեական հետապնդման մարմինները ներգրավվել են քրեական վարույթին, տեղ է գտել նախաքննությունը, այն պետք է շարունակվի և այդ պարագայում պետք է նախատեսել քրեական հետապնդման հարուցում և իրականացում՝ հանրային հետապնդման կարգով (քանի որ այդ դեպքերում արդեն նպատակը՝ հանրային մեղադրանքի միջոցների խնայողությունը փաստացի դառնում է անիրագործելի)<sup>31</sup>:
- ✓ Բացի այդ, նշված մոդելը պահպանելու պարագայում, կարծում ենք, որ պետք է «նեղացվի» մասնավոր մեղադրանքի գործերի շրջանակը՝ վերոգրյալ դիտարկումներին համապատասխանելով:

Եզրակացություն.

<sup>31</sup> Հենց այդպիսի կարգավորում նախատեսված է, օրինակ, ՌԴ քրեական դատավարության օրենսգրքով (ՌԴ քր.դատ.օր-ի 20-րդ հոդվածի 4-րդ մաս, 147-րդ հոդվածի 4-րդ մաս, 319-րդ հոդվածի 5-րդ մաս):

Ընդհանրացնելով՝ եզրակացնում ենք, որ քր.դատ.օր.-ով մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի ներդրվող մոդելն ունի մի շարք խնդիրներ, և այժմյան կարգավորումներով դրա գործարկումը կվտանգի տուժողի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության արդյունավետ ապահովումը: Չի լուծվում նաև այն խնդիրը, որը նախատեսում էր լուծել մասնավոր մեղադրանքի գործերով հիմնական մասնավոր մեղադրանքի կազմակերպման միջոցով, ավելին՝ հնարավոր է՝ դա առաջացնի հավելյալ խնդիրներ: Ուստի՝ գտնում ենք, որ մինչ քր.դատ.օր.-ի մասնավոր մեղադրանքի վարույթը կանոնակարգող 54-րդ գլխի ուժի մեջ մտնելը, այն պետք է առանցաբային փոփոխությունների ենթարկվի: